

ԱՐՏԱՆԻ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՑՆԵՐԸ

Ա.Յու. Սարգսյան

Հանելուկները ավանդական բանահյուսության տարրերից են և վիպական բանաձևային բանահյուսության ժանր են կազմում: Հանելուկի ժանրը ենթադրում է ավարտուն ու պարզ բանաձևեր, կոտ, հակիրճ շարադրանք, փոքր ծավալ՝ սնդո՝ ձևակերպումներով՝ ներկայացնելով ժողովրդի գարգացման ընթացքը, նրա կացութաձևը, աշխարհայացքը, բարոյահոգքնաբանական առանձնահատկությունները:

Հանելուկների ծագումը շատ հին է և լիովին չբացահայտված: Գիտնականների մեծ մասը կարծում է, որ այդ ժանրի ստեղծագործությունները սկզբնապես հանդես են եկել որպես նախնական մտածողության արտահայտության ձևերից մեկը, և դրանց ծագումը կապում է նախամարդու պայմանական խոսքի հետ: Հնագույն ցեղերի անդամները հարձակված էին, որ չբացատրող բուսական և կենդանական աշխարհը ապրում է գիտակից կյանքով և հասկանում է մարդկային լեզուն, ուստի, խուսափելով որոշ առարկաների անունը տալուց, նրանց մասին խոսելիս գործածում էին այլևայլ արտահայտություններ. ինչը և, հավանական է, հիմք է հանդիսացել բանահյուսական այդ ժանրի ստեղծման:

Հանելուկ բառը ծագում է *հանել* բայից, որ գրաբարում նշանակում էր «*ի ներքոստ արտաքս, կամ ի խորոց ի վեր ձգել, արտաքսել, ի բաց տանել, ի դուրս տալ*», ասել է թե՛ բացահայտել, գուշակել, վեր հանել խոր թաքնված ներքին իմաստը: Արցախահայ բարբառում այն ներկայանում է *սրնցրը, պրնցրը* ձևերով, որոնք հնչյունափոխված տարբերակներն են ինչ հայերենի *բանկն* կամ *բանցն* բառի և ունի «*առասպելական, ստախող պատմություն*» իմաստը: «*Պրնցրը պէն աս*», «*քսածնէն սող պրնցրը աս*» և այլն:

Արցախյան հանելուկների գրառման պատմությունը սկսում է 19-րդ դարի II կեսից՝ բանահյուսական մյուս ժանրերի գրառմանը զուգընթաց: 70-ական թվականներին, հանդես գալով մամուլում, երիտասարդ բանահավեր, հրատարակիչ Տիգրան Նավասարդյանը դիմում է առ հասարակամյունությանը՝ կոչ անելով փրկելու, պահպանելու ու հրատարակելու ժողովրդի հոգևոր մշակույթի գանձերը: Նավասարդյանի կոչին արժագանքում են տասնյակ մտավորականներ, որոնց թվում վարանդայի Նոր Շեն գյուղի ուսուցիչ, Շուշու թեմական դպրոցի շրջանավարտ Միքայել Տեր-Հովհաննիսյանը: Վերջինս 1881 թ. փետրվար-մայիս ամիսներին բանահյուսական այլ ժանրերի հետ գրի է առնում նաև հանելուկներ և ուղարկում Տ.Նավասարդյանին, որի ֆոնդում էլ այժմ պահվում են դրանք: Նույն շրջանում Նավասարդյանին հանելուկներ է հաճնում նաև նշանավոր մանկավարժ, բանահավեր Ասաբեկ Բախարյանը:

Նշանակալից է Մակար Բալիսուդարյանի դերը Արցախի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործում: Որպես Շուշու գավառի ինժեռնալ գյուղի ծնունդ քաջատունյակ ինժեռնալ հարսգատ ժողովրդի նիստ ու կոչին՝ նա շրջում է պատմական Արցախը և գրառում ավանդություններ, առած-առեցվածքներ, զրույցներ, ինչպես նաև հանելուկներ, որոնք հրատարակում է «*Բարդաղյան առածներ*» (*Տիլիխ, 1898*) ժողովածուում՝ օգտագործելով նաև իր մյուս ստեղծագործություններում և աշխատություններում:

Արցախյան հանելուկների և մյուս ժանրերի նյութերի հավաքմանը ձեռնամուխ է եղել նաև բնիկ շուշեցի, մասնագիտությամբ գյուղատնտես Կոստանդին Մելիք-Շահնազարյանը (Տնթլախի խաչան): Նրա հավաքած նմուշները պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում, ինչպես նաև Ե.Չարենցի անվան գրադարանության և արվեստ թանգարանի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում: Դրանց մի մասը թվով 143 հանելուկ, տպագրվել է դեռևս 1930 թ.: «*Հանդես ամսորեայի*» 9-10 համարներում:

XX դարի առաջին տասնամյակներում նվազում է հետաքրքրությունը բանահյուսության նկատմամբ: Թե՛րևս հիշատակելի է ծննդով Վարանդայի Նախիջևանի գյուղից Մարիս Խարայեյանի գործունեությունը: Բանահյուսական տարբեր նյութերի շարքում նա գրառել է նաև հանելուկներ Արցախի, Շամշադինի, Ջանգեզուրի տարբեր գյուղերից:

Օգտագործելով նախկինում հավաքագրված բոլոր նյութերը՝ Սարգիս Հարությունյանը 1976 թ. հրատարակում է «*Հայ ժողովրդական հանձնուկներ*» ժողովածուն՝ ընդգրկելով նաև Սեպակի քննակալությունը (Հաղորդ, Տոս, Շուշի, Շուշիքենդ, Սեյդիչեն) բանահավաքների հավաքած հարստությունը։ Հարկ է նշել, որ դասները մի քանի տարի հետո՝ 1960 թ., ժողովածուի հինգ հատիկ լույս է ընծայել նաև «*Հայ ժողովրդական հանձնուկներ*» աշխատությունը, որտեղ հավաքամաներն վեր են նշույված այդ ժանրի հայկական, այդ թվում նաև արցախյան ժողովրդագործությունների բովանդակության խնդիրներն և գեղարվեստական ու տաղաչափական բաժանման հատկությունները։

Երասխաճիտությամբ պնդե է հիշել ծննդով չուշեցի, Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի աճյունը, որի 1920-60-ական թվականներին հավաքած բանահյուսության նյութերը (դրանց շարքում 243 հանելուկ) հրատարակվել են «Նոնայի» Հրապարակի բանահյուսությունը» (Երևան 1971 թ.) ժողովածուի մեջ:

1978 թ. Լեննային Ղարաբաղի ժողովրդագրությունյան մարզային տունը հրատարակեց «Լեննային Ղարաբաղի բանակցություններ» ժողովածուն (կազմողներ Միրայել Աբրահամյան, Ռուբենտ Հահրամյան), որտեղ ընդգրկված է նաև 71 հանելուկ:

Արցախյան բանախյուսության հավաքագրման գործընթացին նոր լիքը հաղորդեց ՀՆՈՒ «Արցախյան» 1991 թ. հրատարակած «Նշխարներ Արցախի բանախյուսության» ժողովածուն։ Այստեղ հեղինակը տեղ է հատկադրել նաև հանելույժներին։

2002թ. լույս տեսավ Արմեն Սարգսյանի «Արցախյան հանելուկներ» ժողովածուն, որտեղ ընդգրկված է շուրջ 500 հանելուկ, իսկ 2009թ.¹ նույն հեղինակի «Արցախի բանավեպային աստվածաբանություն» ժողովածուն, որտեղ հանելուկների թվոր հասնում է շուրջ 700-ի:

Այսպիսով արցախյան հանկուկների հավաքագրման գործընթացը ընդգրկում է մոտ 150 տարիան պատմություն: Հանելուկները, չնայած իրենց տարբեր դրսևորումներին, համախմբվում որոշակի ոճական ձևի մեջ, որի պարզապես տարբերակը ետքն է, որը պահանջում է լատսխյան: Պատուհական չէ, որ գերմանացի գիտնական Ֆրիդրիխը այն անվանել է «սոսանելու»:

Արցախյան յուրաքանչյուր հանելով պահպանել է հարցադրման եղանակը, որը դրսևորվում է շարք հարցական բանավեճումների ձևով՝ «*Էն հինչըն ա՞», «Էն հինչ պէն ա՞», «Էն հու վա՞*» և

Հանելուկներն աչքի են ընկնում իրենց առանձնահատկություններով, որոնցից ամենադժվարը նրանց կառուցվածքն է: Ամեն մի հանելուկ բաղկացած է հանելուկի բուն բաղադրությունից և արտաքին պատկերից, որպես որոշակիություն իմաստով տարբերվում են ժամից, չնայած ունեն նաև ներքին ինչ-որ կապ: Գուշակողի խնդիրն է բացահայտել իրենց ընկալված գոյություն ունեցող նմանությունները, ինչը հենց հանելուկի լուծումն է: Հանելուկային նմանակության և արտաքին պատկերի կերպավորման ամենատարածված նյաանակը լուծվածությունն է, որը կապելի է բաժանյալ հետևյալ տեսակների.

տ) Այլաբանությունը ըստ արտաքին նմանության, նրբ տարտաքին պատկերի և բուն նմանության միջև նկատվում է արտաքին որևէ ընդհանուր գիծ. «Մյնի թինաց, թամթր մրնսց», նուր և (լատիոն)։ Այսուհեղ այդ արտաքին նմանությունը շարժումն հանգումանքն է, և գեներալն իստականիդ լիոխաբանը էլ գնալու ինն։

բ) Այլաբանությունը ըստ գործառական նմանության, երբ հանելուկային և այլաբանական երկերում երբ հաճախվում են գրեթե հատկությամբ, գործառությամբ, ինչպես՝ «Այլ չլինեմ, չա՛ր գնեմ, հիշեցնեմ պետիմ տաք չգտնեմ» (գոյալ), որտեղ գոյալ այլաբանվել է նաև հինո իր մի բան երկ, տաճարի և հատկությամբ պատկերացումով:

գ) Այլաբանությունը ըստ հատկանիշների հավաքական գույքորդման: Սա այն դեպքն է, երբ տաքին աշխարհի առարկաների գծերն ու հատկանիշները դասավորվում են այնպես, որ հավաքական արտոկերը վեր է ամփում անիրական, արտաշտվող, ոչ տրամաբանական երևույթի նման հասկացողության «Մշտ շամբուր, ըրիպթ խղրտված» (մտառ ու մտառների) «Շի՛ք՝ ըմ տամ, ի՛նչ կրծանքն ա» (ծխախոտ):

Մթանից էապես տարբերվում է հանելուկների մի շարք, որտեղ բուն նշանակության և տարբին պատկերի միջև որևէ տարբերություն չկա, և հանելուկի երևույթն ու էությունը անխնայում են իրար: Դրանք իրենք անվանում են իրենց լուծումը. «Կա թէս, կա թէս, անընդուն՝ գիդաւս վէ» (բաժ, թի), «Տյո՛ւր քա՛շ տ, տիւի՛ւր քա՛շ տ» (ազգալ (քաշ)), «Այտզ, փալազ, յո՛ւր տա՛մ չո՛վ իրա՛ս» (փալաս):

Հնդիանուր աշմաութ, հանելուկներում առարկաների բազմակողմանի բնութագրումներ լին տրվում, և հաշվի է առնվում առարկայի ոչ էական, ներկորդական նշանակություն ունեցող օրէ կողմը կամ հատկանիշը: Հենց դա է պատճառը, որ նույն առարկայի վերաբերյալ կազմվել են տարբեր հանելուկներ, որոնցից յուրաքանչյուրում հիմք է ընդգրկվել այս կամ այն հատկությունը, օրինակ՝ «*Մին պոլիզ՝ մաշին էրկու ջուտա ճուր*», «*Հուլօր ա, պուլլօր ա, մազ օնէ, ծալ յօնէ*», «*Մին տօն օնիք՝ պատերը արծաթ, մաշը վիժկէ, վեր քընդգէլ, էլ շինվի չի*» ստեղծագործությունները բնութագրում են ծաւն, ընդ որում՝ առաջինի մեջ նկատի է առնվել սպիտակուցի և դեղնուցի առկայությունը, ներկորդի մեջ՝ ձվի՝ անցը չունենալը, բայց նրանց մագալտի՝ ճոխ առաջնապը, նորույթի մեջ՝ ձվի կեղևի արծաթագույն, իսկ դեղնուցի սպիտակուց լինելու ներույթը: Դրան հակառակ արցախցին ստեղծել է հանելուկներ, որոնք կարող են ապով տարբեր, նույնիսկ սևում, տմսակով իրարից հեռու առարկաների վերաբերյալ: Դրանք, այնուամենայնիվ, ունեն ինչ որ ընդհանուր գիծ. «*Տուր վիժկաթ, մաշը մէս*» (կրիա, ընկալ), «*Ալալա, բալալա, տար խաղ ըրա, պեր կախ ըրա*» (սագ, թառ, մաղ):

Սակայն արցախառայ բանասիրության մեջ հանդիպում են նաև նրկակի, ետակի, բազմակի լուծման առարկաներ ունեցողներ, ինչպես. «*Մին թուրք տոխ, թուրքէն տակէն մին դուղ տոխ, դուղին տակէն էրկու ծառ, ծառէն տակէն էրկու գձօր, գձօրէն տակէն էրկու նօլ, նօլէն տակէն մին ճէղաց, ճէղացէն տակէն մին թուրք*» (գլուխ, ճակատ, հոնքեր, աչքեր, քիթ քերան, դուռն):

Իրենց առանձնահատկություններով հանդերձ՝ արցախյան հանելուկները ունեն նաև ընդհանրություններ բանասիրական մյուս ժանրերի հետ: Այդ աղերսները առաջին հերթին նկատվում են էպիկական ստեղծագործությունների հետ: Հեքիաթներում հանելուկայինը տրտահայտվում է իբրև պլոտմալային կառուցվածքի առանձնահատկություն: Հանցույթը հանելուկային որևէ փնտել կամ հարցադրում է: Այսպես. «*Մուկները խէ լը՜ն ծիծաղում*» հեքիաթի վերնագիրը եմք պլոտմալային առնցքի հանգուցային հարցադրումն է: Սյուժեն հետևյալն է. արքայա ծնունդին երկու երաշք ծով է բռնում և նվիրում թագավորին. նրան էր «*լայնդական*», Թագուհին, լինելով «*խիստ պահպանողական*» և «*անքիծ*» վարքի տեր, ակնհայտ «*տեժամոթյամբ*» է ընդունում նվիրը, քանի որ ծկններից մեկը արու էր, իսկ ինքը չէր կարող հանդուրժել ուրիշ արուի ներկայությունը իր կողքին: Ձկները ծիծաղում են թագուհու պահվածքի, ինչը շարժում է թագավորի գայությունը, և նա ամեն կերպ ձգտում է պարզել ծիծաղի պատճառը: Վերջապես լուծվում է հանգուցը. թագուհու նաժիշտը ինք թագուհու սիրելեանն է, ծպտված: Այս հանգուցալուծումն էլ դաշնում է հանելուկային իրադրության լուծում:

Մեկ այլ՝ «*Թակինք՝, օտինք՝, օտինք՝, թակինք՝*» հեքիաթի վերնագիր – հարցադրումն ունի հետևյալ մեկնությունը. կինը նախկինում ամուսնացած էր հարուստ մի առևտրականի հետ, որը ժլատության պատճառով սովից մեռնում է: Ազատվելով նրանից և տնօրինելով որդ հարստությունը՝ արյին նոր ամուսին է առնում, և ամեն ճաշի ժամի կատարում են հետևյալը. տան անկյունի արկղից հանում են ժլատ հանգուցալի գանգը և գդալով հարվածներ տնդում վրան: Այստեղ է ապվում ժողովրդական առածը. «*Չուտողէն իլաժը ուտողէն հալալ ա*»:

Հեքիաթ հանելուկների մեկ այլ խումբ է առանձնացնում Մ.Գրիգորյան-Սպանդարյանը. Այսպես.

«*Էն հինըն ա՞. – Բինացալ ըմ ասալ, ասալ ա լավ, վի՛ր կ՛ա վի՛չ, կ՛ալու յըմ: Հարբաթ յի՛կալ ա, վի՛ր յի՛կալ վի՛չ:*»

Էտ էն ա. մին կընճ՝ ուրան ըխճրկանը դրկլում ա հրըրվանէն տօնը, ասի, վի՛ր հրըրվանը ուրա՛վունը կ՛ա, մին խըրճ՝ գուրոց ամի: Հրըրվանըն ասում ա. – Բինի քու սօր ասի, վի՛ր մարթոս տանը չի, վի՛ր կ՛ա վի՛չ, կ՛իլալան ըմ:

Ախօհ՝ը մօրըն ասում ա. – Հարբաթ յի՛կալ ա, վի՛ր յի՛կալ վի՛չ:

Նույնը, որպես Ապարանին և Կարմիր-Հին Բաշքենդին հատուկ, իր ժողովածուում «*Տղա, սիրած աղջիկ, հայր*» անվան տակ գեղեղել է նաև Ս.Հարությունյանը, իսկ Գ.Տեղ-Աղեքսանդրյանը, իբրև այլաբանական ասույթ, ընդգրկել է «*Թիֆլիսեցոց մտավոր կյանքը*» (Թիֆլիս, 1885, մասն Ա) ժողովածուի մեջ:

Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանը բերում է այդպիսի ինը հեքիաթ-հանելուկ, սակայն դրանք ամենից առաջ հնարագիտությունն ու սրտատուրայուն փորձող խնդիր-առաջադրանքներ են՝ տրամաբանական թույլ կապերով, և առանց լրացուցիչ բացատրության անհնար է լուծել:

Բացի այդ ընդհանրություններից հանելուկային ընդհանուր գծին և նրկայաներ են առկա թուր այն հեքիաթներում, որտեղ հերոսին հանձնարարվում է որևէ դժվար կամ անիրագործելի պայման, և վերջինս կատարում է դրանք՝ դիմելով տարբեր միջոցների:

Հանելուկները աղերսվում են նաև առաջների հետ, մանավանդ որ երկուսն էլ ունեն առաջնական, կառուցվածքային ընդհանրություններ: Որոշ առաջներ, կորցնելով իրենց ներքին շարժող, վեր են ածվել հանելուկների. «Թիփափափուրան տնթնփուտ ա ինքմ, անթնփուտան թիփափուր» (հավ և ծու) կամ «Աքժ վրճըն վեր քնգամ, տինքրկափերը շրտազափ» (խաղողի ձողույց): Այս երկուսն էլ հանդիպում, երբ մեկնաբանվելով հանելուկը ստանում է առաջի արժեքը. «Տու պահե տրքնուպչի, յիս ժժժ գրաճիմ մրթըրմաչի» (զգնալ):

Ալեհայտ է հանելուկների աղերսակցությունը ժողովրդական խաղիկներին: Էլերջիկները տարբարում են երկու մասից՝ բնության պատկերի և քնարական զգացմունքների գուգադրումից, որոնցից առաջինը դառնում է երկրորդի փոխաբերական արտահայտության միջոցը. «Կրնքստիմ, աս հարթ ա, Չորթ կուրս գժու ու վարթ ա, Զքժգեթ ըսթգեթ էն սրղեն, վեր ռուշմանըտ տանա թառա»:

Փոխաշնչություն արտահայտություն է նաև այն, որ որոշ՝ հատկապես երկարաշունչ հանելուկներ, վերածվել են երգի. «Բաթ, բաթ, մի չուվալ ցակառո, վեչ կոթ օնե, վեչ արկաթ, արքադեն կրխեն օխտը գժու, օխտը գժուին մին բուլբուլ...» և այլն: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում «Բուլբուլ, բուլբուլ, տօշըր սեզ, Հասանը կ՛ամ ա կրխաթեզ, Թազգա օնիս, տուս կեզ, Բօհնա օնիս, թափ տօ, կեզ» խաղիկը, որի առաջին երկտողը գործածվում է արվեստ հանելուկ գաղանա վերաբերյալ:

Որոշ հանելուկներ ներկայանում են նաև որպես շուտասելուկներ, ինչպես՝ «Աքժ տամ, բաթ տամ, ժուլուլառ փրնիմ, ծիթ՝ տամ» (կշեռք):

Մեծ են արցախյան հանելուկների ընդհանրությունները ինչպես հայկական մյուս լեզուների, այնպես էլ այլ ժողովուրդների համանման ստեղծագործությունների հետ: Օրինակ՝ «Հաթուն ծուր տամ, դանսն օռչի» հանելուկը, որ ասվում է ձմեռուկի, սեխի, գդուռի վերաբերյալ, համարյա նույն ձևով կրկնվում է նաև խոտորջուրում, Բորչալուում, Վանում, Կոտայքում, Գարաբաղյանում, Մոկուում, «Հաթր ինիլու՝ խոխուն ժժժը բազաթ» (կրակ և ծուխ) հանելուկին ամենազգալի ենթ ոչ միայն Ախալցխայում, Լոռիում, Բորչալուում, այլև ռուսական և կարելիական արտահայտության մեջ. «Отец не успел родиться, а сын попал в солдаты», «Отец только что родился, а сыновья уже в лес ходят», «Բունում ա, ժունում, սրեղ չի հրնըրմ» ստեղծագործությունը իր տարբերակներն ունի նաև ռուսական և մոլդովական իրականության մեջ՝ *Идём, идём, а против нас не можется, Темень, темечь, не вытечет, бегит, бегит, не выбегает* ևն.

Ուղտիկ՝ց են գալիս այս ընդհանրությունները: Անհնար է ժխտել, որ դրանք ժողատությունների և փոխազդեցությունների արդյունք են, բայց, մյուս կողմից լուրջ քննելով, փոխար չէ համոզվել, որ դրանցից յուրաքանչյուրը իր ազգային դիմագիծն ունի և արտացոլում է հարազատ ժողովրդի կենսակերպն ու աշխարհընկալումը:

Խոսելով նման առնչությունների մասին՝ Պոլ Լաֆարգը գրում է. «Ամենատարբեր ու անսովոր ժողովուրդների մոտ մենք գտնում ենք նման երգեր, գրույցներ, սովորույթներ: Անհնարին է կարծել, թե այդ գուգադրությունը երևանում լինի ավանդության կամ փոխառության վրա: Հույն ժողովրդի նույնությունն է, որ մարդուն թե՛ պնտնել և թե՛ պստնել հանգեցրել է նույնակերպ մշակման: Բարձր դարի վայրենիները իրենց դանակներին, կացիներին և մյուս քարե գործիքներին տալիս էին եսթ և նման ձևեր, ինչ և Ափստրալիայի բնակիչները: Հիշտ այդպես էլ միևնույն երևույթներից արտացած իրենց տարբերությունները մարդիկ արտահայտում են նման երգերի, գրույցների, սովորույթների մեջ»:

Թերևս անսրբամաքանական չի լինի Լաֆարգի այդ կարծիքը տարածել նաև հանելուկների վրա:

Բազմազան ու բազմաբնույթ է արցախյան հանելուկների թեման: Հանելուկային տարրերների և բանաստեղծի մեջ արծարծվել են արցախյան շրջապատող բուսական և վայրահայտական աշխարհի, տնտեսական գաղափարները, երկրային ու երկնային մարմիններն ու երևույթները, այն, ինչ հնարավոր է տեսնել, լսել, զգալ: Պատահական չէ, որ այս ժանրում առաջին հերթին արտացոլվել են գյուղատնտեսության տարբեր բնագավառներ՝ կապված երկրի տնտեսական բնույթի հետ: Արգելափակում համար կարևոր բնագավառ է երկրագործությունը, որ հնուց Վեր իսկ հանդիսացել է հիմնական գրավորմունքներից առաջնայինը: Այսպես՝ «Մին արտ օնիմ, վարվել չի, մաչի քարերը հրմբարվել չի» (երկինք և աստղեր) հանելուկի մեջ ժողովուրդը երկրի անմարդավոր լինելը կապել է մեծ հողատարածության, իսկ աստղերի առատությունը՝ արցախյան հողերում այնքան տարածված քարերի հետ: Կտմի և եղների նկարագրությունն է տրված «Կրթօխը փաթ, տավր քար, օթ վրնսանն Էրկու սաթ» ստեղծագործությունում: Ստվար թիվ են կազմում հազարավորական տարբեր գործիքների նվիրված հանելուկները. «Տիլի տամ, հիլի-միլի տամ,

տալիէն տակալը ծիլի-միլի տամ» (գութան), «Մին կոթանէ, հարուր ըրխանէ, կօտէ, կօտէ, էլիս լըդայ» (մանգաղ), «Մին քանսավար կա՝ հիշքան ըմ խըն ըր տամ, բուշտանըմ չի» (ջրաղաց):

Տալածված են նաև այգեգործությանը և բանջարաբուծությանը նվիրված ստեղծագործությունները, որտեղ բնութագրվում են բազմաթիվ մրգեր, պտուղներ, բանջարեղեններ, ինչպիսիք են ընկույզը, նուր մատուրը, մոշը, մորին, հոնը, թուփը, խաղողը, դդումը, ձմերուկը, բոդկը, գագարը, սոխը, եգիպտացորենը. «Տուր աղոս, մայր բախըր» (ընկույզ), «Ըօրերը հանին, նըստին, լաց ինիս» (սոխ), «Բօսուտ թալա՝ լըվաշալ պէտնած» (եգիպտացորեն), «Հարը դիթ, մարը կըռ, խօխան խէլունը, թօնը պըլ» (խէչմար, վագ, խաղող, գինի) և այլն:

Երկրագործությանը զուգընթաց արգասիքի գրավվել է անասնապահությանը, թռչնաբուծությանը, մեղվաբուծությանը, շերմապահությանը՝ ստեղծելով տեսակալ հանելուկներ, որտեղ որպես հանելուկային առարկա կամ արտաքին պատկեր հանդես են գալիս եզր, կովը, գոմեշը, էշը, ոչխարը, այծը, ուղտը, հավը, շերամորդը, մեղուն. «Մըլ վ յիգըր լախզին խօխէնը որիխացէն» (բով և հաց), «Էնթը սարէն յըրա, սարը մաշկէն յըրա» (ուղտը), «Մշէլիս ինթը ուրան հանգ՝խտը կըտըրմ ա» (շերամորդ)...

Որոշ գործերում արձագանք են գտել Արցախում տարածված արեւնտաները: Օրինակ՝ «Կանանչ հինիս, սալիտակ թիլ տամ, կ'արմուր կ'օրծիմ, թօխ կըրորիս» (մոշ), «Հէնգ՝ ախպէր մինը քար ա կըրըմ, մըկալը պատ ըն շաբըս» (գուլպայի ճաղեր) հանելուկներից առաջինում տրվում է ոստայնագործության, իսկ երկրորդում՝ որմնադրության ընդհանուր նկարագրությունը: Առավել հաճախակի են հանդիպում կենցաղում գործածվող տարբեր առարկաներ՝ բով, մառ, շերեփ, գառ, ճակարակ, կուծ, ասեղ, գուլպա, սառնեղ, փափախ...

Հանելուկային առարկա են դարձել նաև երկինքը, երկնային մարմինները, բնության տալքեր երևույթները՝ աստղերը, ամառը, որոտը, անձրևը, կարկուտը, կայծակը, ծիածանը, ծյունը, քամին: Առավել ընդգծվում են արևն ու լուսինը, որոնք ներկայանում են մերթ քրթ ու ելուրը, մերթ հով ու տաք բովի, մերթ անծայրածիր արտում վազվզող երկու կաքավների, մերթ էլ՝ պղնձե կաթսայի մեջ դրված ձվերի տեսքով: Որոշ ստեղծագործություններում հանդես են գալիս ժամանակի միավորները. «Մին ծառ օնիմ տըսներկու ճըղնանէ, ամմեն ճըղնանը օրօտան տիըլ՝ կէտ սիպտակ, կէտ սըլի» (տարի, ամիսներ, օրեր), «Շըմբէն ա՝ կ'արունըր պատէն, ամբէն ա՝ կ'արունըր պատէն» (գորգ), «Մըլ կըծէճ՝ հուրթըն ի վէր քըցիմ, քա մօր պօրտըն ի վէր քըցիս» (գիշեր):

Արցախյան հանելուկները աչքի են ընկնում նաև իրենց ինքնատիպ ու բարդ արվեստով, կառուցվածքային բազմազանությամբ, գեղարվեստական արտահայտչամիջոցների լայնակի դրսևորմամբ, տեղաչափությամբ:

Հանելուկային պատկերավորման տարածված միջոց է անձնավորումը: Անկենդան առարկաներին մարդկային հատկանիշներ վերագրելը հանելուկները դարձնում է հետաքրքիր, աշխույժ, թաքում ու կենդանի: Որպես անձնավորող է ունի՝ հանդես են գալիս պատը, ազին, մուլան, փոքրիկ երեխան, օմբը ու եղբայրը և ուրիշներ. «Ապան հարուր չօխ օնէ, էլիս ամմա՝ մըրտըր ըն» (կաղամբ), «Ազին ալլէր ա մաղալ. տափը սիպտըկցըրա» (ծյուն), «Մին խօխա, օխուր չօխա» (ծննդադիկ) և այլն:

Հետաքրքիր է «Մին դաշանգ՝ կընէճ՝ ուրօսունինը խուխաւտա»՝ ստեղծագործությունը, որտեղ եայնոց այբուբենը եանդես է գալիս գեղեցիկ կնոջ, իսկ սյառները՝ երեխաների տեսքով:

Անձնավորման արտահայտչություններ են նաև կոչականների և սլոգանախոսությունների վրա կառուցված հետևյալ երկխոսությունները.

- Ա՛ կըմըկրիւ, թօս նը՝ս թոնում,
- Ա՛ պօկը ծակ, հինչ ը՞ն անըմ (ծուխ և ծխնելույզ),
- Ա՛լ չաթու, չա՛լ չաթու, ըշտըղան ը՞ն կ'ամ,
- Ծօխն ըմ կ'ամ,
- Պա խէ ցամաք ը՞ն,
- Մաշան ըմ կ'ամ (ամառ):

Մի շարք հանելուկներում պատկերավորման կարևոր բաղադրիչ է դարձել խորհրդանշումը սիմվոլիկա: Առանձնապես լայն են կենդանական սիմվոլիկայի դրսևորման շրջանակները: Կովը խորհրդանշում է եկամտաբերություն, կարմիր կովը՝ գայություն, բնության տարները, եզր ուժ, աշխատանք, շան լակուտը՝ տկարություն և այլն:

Խորհրդանշումը արցախյան համար կենսափորձ է, պատմություն: Հայտնի է թրի մասին ասվող նույն հանելուկի նրբը տարբերակ, որտեղ թուրը մերթ ներկայանում է Գարբիլ հրեշտակապետի, մերթ արաքի, մերթ էլ՝ Սասունցի Դավիթի կերպարանքով. «Մըթէն տօն

«Կախարչի լը // արաբը // Դավաթը մաշին քոն»։ Անշուշտ, Կ'ափրըլէլը խորհրդանշում է մահ, արաբը՝ արաբություն, իսկ Դավաթը՝ գորություն։

Պատկերավորման միջոց է նաև չափազանցությունը՝ հիպերբոլան։ Արցախցու լեռնակայությունը այստեղ սահմաններ չի ճանաչում։ Պատահական չէ «յուն օղտը շինօղ»՝ արցախայտության ծնունդը։ Երբեմն այլաբանական պատկերի տարրերը այնքան են չափազանցվում, որ ընդհանուր պատկերը թվում է անհավանական. «Օղտա մի՞ժ ա, լույս կուճի» (իդղեն և կայծ), «Լսալի՞ք վարիմ, էրուշ տի՛ղ հինձիս» (նստակ), «Կապը ծիք՝ տամ, սարը կ'ա» (աղտ) և այլն։

Արցախյան հանելուկները արձակ կամ չափածո ստեղծագործություններ են։ Արձակները լրացված են պարզ կամ բարդ նախադասություններից. «Պորուտին տղան պիրանըմըտ ճուր վէր ատ» (ջրի փարչ), «Էրկու ախպէր մին հողավ ք'ունում ըն՝ սաղ աշխարքըս տղ'սնըմ ըն, մինը մինին աղ'սնըմ չի» (աչքեր)։

Առավել տարածված են չափածո հանելուկները։ Դրանք կարող են լինել միատող, երկտող, եռտող, քառատող և ավելի, որոնց վանկերի քանակը տատանվում է 3-10-ի միջև։ Արցախցին խոշոր ուշադրություն է դարձրել նաև հանգին ու տաղաչափական ռիթմին՝ այդ նպատակով երբեմն նույնիսկ ստեղծելով իմաստագուրկ հնչյունավորքներ։

- Արվան-արվան,
կ'ը տէ ք'արվան,
վէչ խօտ կօսին,
վէչ տէրման (Ձկներ)։

Այսպիսով՝ արցախյան հանելուկները ամբողջացված են թե՛ բովանդակային, թե՛ լատիկաձևային, թե՛ տաղաչափական արվեստի առումով։ Դրանք բազմաբնույթ են ու լրացվածքալից, ինչպես արցախցու մտածողությունը, որը պարզապես տիեզերք է։

Մանկություններ

1. Տիս' Аникин В.П., Пословицы, поговорки, загадки и детский фольклор, М., 1957, Зеленин Д.К., Табу слов у народов Восточной Европы и Северной Азии, Сборник музея антропологии и этнографии, т 8-9, Л., 1929-30.
2. Տի'ս Նոր բաղիրը հայկազեան լեզուների, հ. II, Երևան, 1981, էջ 45։
3. Տի'ս նույնը, հ. I, Երևան, 1979, էջ 437։
4. Տիս, Ս.Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան 1960, էջ 16։
5. Տիս' Նմուշներ ԼՂ բանահյուսությունից, Երևան 1978, էջ 39։
6. Տի'ս նույն տեղը էջ 65։
7. Տ'իս Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Ե. 1971, էջ 325։
8. Տի'ս Հայ ժողովրդական հանելուկներ, Ե. 1965, էջ 88։
9. Տիս' Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, էջ 15։
10. Տիս' Հայ ժող. հանելուկներ, Ե., 1965, էջ 40։
11. Տի'ս նույնը էջ 22։
12. Տի'ս "Русские народные загадки, пословицы, поговорки", М, 1990, ст.74.
13. Տիս' «Корельское народное постическое творчество», Л, 1982, ст.338.
14. Տիս «Русские народные загадки, пословицы, поговорки», М. 1990, ст.30.
15. Տիս' П. Лафарг, Очерки по истории культуры, 1926, стр.51-54.

Резюме

В статье представлены жанровые и содержательные особенности одного из важнейших жанров арцахского фольклора-загадок. Особое внимание уделяется изобразительным средствам этих фольклорных образцов.